

**Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒՄ**
(4 հունվարի 2004 թ.)

«Ցանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ.ամեն»:

Սրբի և հոգու աննուն բերկրալից խնդությամբ ամոլեցուն զգացումներով ու ապրումներով իբրև երախայրիքի քահանայագործության և Նոր փարվա հուսալի արշալույսին երախտագիտական հայցս եմ առաքում Բարձրյալն Աստծուն՝ աստվածահաղորդ նարեկացիաշունչ փողերով:

*Ինձ, որ սպարկերդ եմ, մեղքով հնացած,
Քուրաներիդ մեջ ձուլի՜ր վերսրին խոսքիդ հրայրքով:
Քո հանգստարան – խորանի՜ մարմնիս
Շինվածքը խախտված, պահապան հոգուս հեղ,*
պաղապրում եմ,

*Մաքրագործի՜ր քեզ ի քնակություն:
(Գրիգոր Նարեկացի, Բան ԺԹ, Ա)*

Եվ իմաստուն սաղմոսերգուի նման ասում եմ. «Տա Աստված, որ խոսեմ իրավախոսությամբ և ունենամ Նրա փված շնորհներին արժանի մրավումներ» (Իմաստ. Սող. Է 15):

Ահա աստվածապարզ և բարի ակնկալիքներով մի Նոր փարի ևս, Ամանոր, որը կարծես նորաբաց փարեակզբի նման դեռ ճերմակ կրավ և մաքուր մի էջ է փրված յուրաքանչյուրին: Արդյո՞ք այն ծրարելու և այդպես դարարկ պահելու ենթակա է, իհարկե ո՛չ: Ինչպես որ հմուտ արվեստագետ-նկարիչն է իր համար թանկ կրավի վրա ջանում պարկերել նորը, լավագույնը՝ անմահանալու հորինաստեղծ գործերով, այնպես էլ մենք մեր կյանքի նորաբաց այս էջին դրոշմենք, պսակագարդենք նորանոր բարի, առաքինի ու մշտամնա բյուր արժեքներով ու արարքներով՝ հավիտենական կյանքի համար գանձեր դիզելով երկնքում, քանի որ ուր մեր գանձերն են, այնպեղ և մեր սրտերը կլինեն:

Նորոգության պարգամն է, որ հնչում է այսօր մեր ականջներին և թակում մեր հոգիներին ու սրտերի դռները: Ականջալուր լինենք և անսանք առաքելապարզամ հորդորին, որ եթե մեկը Զրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ և հիմա ամեն ինչ նոր եղավ: Հնի հեղ հեռու վանենք հին մարդուն իր գործերով, ամեն փեսակ հոռի և փիան բարքերն ու սովորությունները, և ընդունենք նորին՝ նորոգված աստվածախոսական շքեղաշուք առաքինությամբ, բարի գործերով: Եվ լիովին մաքրագործված հոգով ու վերանորոգված մարդով սրբագրենք, ինքնահասակեցնենք մեր կյանքի ուղին՝ իբրև մշտարթուն ու անմար փառոս ունենալով քրիստոսապսակ աստվածահաճո իրագործումները: Նորոգությունը մեր մեջ, մեր կյանքում, մեր ներաշխարհում իրագործենք: Ինչպես օրեր առաջ ժրագնա-

րեն պատրաստվում էինք պարշաճորեն դիմավորել Ամանորը՝ պերճաշուք զգեստներով, կահավորված բնակարաններով, շրջապատված ցանկալի անձնավորություններով, գեղեցկագարդ կահ-կարասիով ու մաքուցմամբ, բազմապեսակ խորտիկների ճաշակմամբ, ապա առավել ևս վայելուչ է մեր իսկապիպ ինքնությամբ, մաքրամաքուր վեհանձնությամբ ու կենցաղով բարեգարդներ մեր սրտերը, մրաժումները և լինենք պարվավոր ու ընդիր աւտոներ՝ սրբագործված և պիտանի մեր Տիրոջը՝ պատրաստված ամեն բարի գործերի համար:

Մոտենանք և հաղորդ դառնանք Փրկչի քավչարար մարմինն ու արյանը՝ հոգեղեն հացին, իմացության հացին, որ մարդու սնուցիչ աղբյուրն է, և վաղն անսպառ ուրախությամբ ընդունենք և ողջունենք Աստվածաշնորհության հրաշախորհուրդ սուրբ ավերիսը: Ինչպես որ բարեկամ ընդունելիս հյուրասիրաբար բացում ենք մեր բնակարանահարկերի դռները և անպատեհություն ենք զգում կեղծավոր կամ նենգ այցելուի ներկայությունից, այնպես էլ հրաժարվենք չարի խաբեպարի աշխարհային հրապույրներից և խնդասիրտ ցնծությամբ փարվենք ու մեր սրտի աներևույթ դռները բացենք՝ ընդունելու մանուկ Հիսուսին, բնակության համար մեր հոգիները վերածենք մի փոքրիկ մսուրի, ահա հավիտենական կյանքի առհավարչյան:

Նոր տարին նոր որոշումների, նոր գաղափարների, նոր հույսերի և նվիրական փափագների սկիզբ է: Եվ հիմա գոհունակ սրտով է, որ փառք եմ տալիս Քեզ՝ Նայր Ամենակալ, որ իմ երեւոն քայլերը հաստատում դարձրիր, երբ առաջին անգամ, իբրև ուխտի մանուկ, մուտք գործեցի ինձ համար նվիրական ուխտավայր ու հոգևոր ծննդավայր դարձած այս հնաբույր Տաճարը, ու այսօր հոգեծնյալ պատանուս ուխտը կյանքի կոչեցիր՝ պարարագելու Քեզ, բաշխելու կենարար մարմինդ և սրբարար արյունդ:

Որպես Վեհափառ Նայրապետի հոգեկիր զավակ, իմ որդիական ամենաազնիվ շնորհապարտ զգացումներն եմ հայտնում Ձեր հայրախնամ հոգաժության ու հոգաբարության համար:

Մեր՝ հոգեծնյալ զավակներիս սերն ու հարգանքը մեզ Ս. Հոգու աստվածահեղ շնորհներով պսակագարդողիդ՝ Դավիթ Սրբազանին:

Մեր մութերում անմահորեն հավերժագրված և հուշագրված ապրելու են մեր հոգևոր նախակրթարան Շիրակի Ընծայարանը մեր հոգևոր դարբնոց Գևորգյան Հոգևոր Ընտարանը:

Եվ այժմ, Նոր տարվա նախասեմին, աղոթում եմ փիեզերքի Նորոգողին, որպեսզի կրկին նորոգի մեր հոգիները պահպանող այս մարմինները՝ իբրև հանգստարան և տաճար Աստուծո՝ Իր իսկ բնակության համար:

Նորոգող հնութեանց

Նորոգեա եւ զմեզ,

Նորոգ զարդարեա: